ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Քաղաք ***20.12.2013 թ.***

Նախագահում էր մարզպետ Ռ. Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 85-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա. Հակոբյանը, Մ. Մանուկյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարսեղյանը:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների 2013 թվականի սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /Զեկ. Յու. Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ/

2. Մարզում 2013 թվականի ձմեռային զորակոչի անցկացման ընթացքի մասին:
   /Զեկ. Ի. Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

3. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

Վ. Հարությունյանը - Գանձակ համայնքի ղեկավար
Կ. Շուշանյանը - Արտանիշ համայնքի ղեկավար
Ե. Կարապետյանը - Չկալովկա համայնքի ղեկավար

Հայտարարություններով հանդես եկան մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ. Հովհաննիսյանը և կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ. Բաղալյանը:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռ. Գրիգորյանը:

Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ու աշխատավարձերի գծով կուտակած պարտքերը մարելու ուղղությամբ և մինչև տարեվերջ ապահովել դրանց տարեկան ցուցանիշները.

2) մինչև ս/թ դեկտեմբերի 25-ը համայնքների 2014 թվականի բյուջեները ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏՋ վարչություն:

Ներկայացնել իրատեսական բյուջեներ.

3) համայնքների բյուջեներին 500.0 /հինգ հարյուր հազար/ և ավելի դրամ պարտք ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանցից պարտքերը գանձելու համար հայցով դիմել դատարան.

4) 2013 թվականի ձմեռային զորակոչի անցկացման ընթացքում զինվորական կոմիսարիատների հետ համատեղ կազմակերպել 18 տարին լրացած և մինչև 2013 թվականի դեկտեմբերի31-ը ներառյալ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրված ու տարկետման ժամկետը լրացած անձանց զորակոչը.

5) 2013 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզում 2013 թվականի ձմեռային զորակոչն անցկացնելու միջոցառումների մասին>> N 194- Ա որոշման հանձնարարականների կատարումը.

6) համայնքների բնակիչներին, գյուղացիական տնտեսություններին տեղեկացնել տրամադրվող պարարտանյութի, սերմացուի, դիզվառելիքի մասին և մինչև ս/թ փետրվարի 1-ը մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն ներկայացնել նրանց անհրաժեշտ պարարտանյութի, սերմացուի և դիզվառելիքի հայտերը.

7) հետևել, որ մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասունների համատարած հաշվառման գործընթացն իրականացվի ճշգրիտ թվերով և ժամկետներում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ